ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 11, 1961 Общественные науки

Հ. Խ. Կարճիկյան

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՈՒԺԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՒ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սոցիալիստական հասարակության զարգացումը տեղի է ունենում բանվորական ուժի անընդհատ ընդլայնված վերարտադրության պայմաններում, որը հանդիսանում է հասարակության ամբողջ վերարտադրության գլխավոր էլեմենտներից մեկը, նրա մի մասը։

Բանվորական ուժի ընդլայնված վերարտադրության հետ անխզելիորեն կապված են աշխատանքային ռեսուրսների լրիվ և բարձր արդյունավետությամբ օգտագործելու հարցերը։ Կոմունիստական հասարակության ծավալուն կառուցման ժամանակաշրջանում ժողովրդական տնտեսության մեջ բանվորական ուժի ռացիոնալ օգտագործման հարցի կարևորությունը նշվում է Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ծրագրում և պարտիայի XXII համագումարի նյութերում։ Պարտիայի ծրագրի մասին իր զեկուցման մեջ Ն. Ս. Խրուշչովն ասաց. «Ծրագրի ամբողջ նախագծի միջով անցնում է այն միտքը, որ կոմունիզմի հիմքերի հիմքը բարձր արդյունավետ, գիտականորեն կազմակերպված, կատարյալ տեխնիկայով զինված աշխատանքն է։ Ուստի աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը պլանավորման ու տնտեսավարման կարևորագույն կողմն է»։

Բանվորական ուժի ընդլայնված վերարտադրության հիմնական աղբյուրներն են. աշխատունակ բնակչության քանակի ավելացումը՝ երկրում բնակչության աճի շնորհիվ, և բնակչության այն մասի արտադրության մեջ ներգրավումը, որը զբաղված է օժանդակ ու տնային տնտեսության մեջ և չի մասնակցում հասարակական արտադրությանը։

Սովետական Միության բնակչության ընդհանուր թիվը 1960 թ., համեմատած 1913 թ. հետ, չնայած համաշխարհային երկու պատերազմներին և քաղաքացիական կռիվներին, ինչպես և դրանց հետևանքով ծննդաբերության խիստ նվազմանը, 159,2 միլիոն մարդուց (ՍՍՌՄ ներկա սահմաններում) հասել է 212,3 միլիոնի, կամ աճել է 33,4%-ով։ Հայկական ՍՍՌ-ում այդ ժամանակաշրջանում բնակչությունը աճել է ավելի արագ։ Դա բացատրվում է ինչպես բնակչության բնական աճի առավել բարձր տոկոսով, այնպես էլ նրա մեխանիկական աճով՝ ի հաշիվ արտասահմանի հայերի հայրենադարձության։ Հայկական ՍՍՌ-ում 1959 թ., 1913 թ. համեմատությամբ, բնակչությունը 1000,1 հազարից հասել է 1763,0 հազարի, կամ աճել է 76,3%-ով։ Հայկական ՍՍՌ-ում բնակչության աճի գլխավոր տարբերիչ գիծը մնում է բարձր ծննդաբերությունը, որը մահացության խիստ նվազման պայմաններում ապահովում է բնակչության համեմատաբար բարձր բնական աճ։ Եթե 1959 թ. ողջ ՍՍՌՄ-ում յուրաքանչյուր 1000 բնակչին միջին հաշվով ընկել է 25 ծննդաբե-

րություն, մահացությունը կազմել է 7,6, իսկ աճը 17,4 մարդ, ապա Հայաստանում համապատասխանաբար կազմել է՝ 41,0, 7,9 և 33,1 մարդ։

Ստորև բերվում են տվյալներ ՍՍՌՄ-ի և Հայկական ՍՍՌ-ի քաղաքային և գյուղական բնակչության թվի վերաբերյալ՝ 1913, 1939 և 1959 թթ.։

	Ողջ բնակչությունը (միլիոն)	Այդ թվում		Տոկոս. համեմատ ողջ բնակչ. հետ	
		քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական
ՍՍՌՄ (միլ. մարդ)					
1913 թ. ՍՍՌՄ-ի ներկայիս սահմ.	159,2	28,1	131,1	18	82
1939 թ. ներկայիս սահմ. . . .	190,7	60,4	130,3	32	68
1959 թ. ըստ հունվարի 15-ի. մարդահամ.	208.8	100,0	108,8	48	52
1960 թ. հունվարի 1-ին	212,3	103,7	108.6	49	51
Հայկական ՍՍՌ (հազ. մարդ)					
1913 թ. ներկայիս սահմաններ	1000,1	104,0	896,1	10,4	89,6
1939 թ. ըստ հունվարի 17-ի մարդահամ.	1282.3	366,6	915.9	28,6	71,4
1959 թ. ըստ հունվարի 15-ի մարդահամ.	1763.0	881,8	881,2	50,0	50.0

ՍՍՌՄ-ում և Հայկական ՍՍՌ-ում գյուղական բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվի մեջ անընդհատ իջնում է և 1959—1960 թ. կազմում է ամբողջ բնակչության մոտավորապես կեսը։ Սակայն մեզ թվում է, որ հասարակական արդյունքի ժամանակակից կառուցվածքի պայմաններում, երբ արդյունաբերության բաժինը կազմում է 61,5%, իսկ գյուղատնտեսությանը՝ 17,4% (1959), քաղաքային և գյուղական բնակչության միջև եղած հարաբերակցությունը չի համապատասխանում երկրի արտադրողական ուժերի զարգացման աստիճանին։ ՍՍՌՄ-ի բնակչության կառուցվածքի նման հարաբերակցությունը հետևանք է այն բանի, որ աշխատանքի արտադրողականությունը գյուղատնտեսության մեջ խիստ հետ է մնում աշխատանքի արտադրողականությունից արդյունաբերության մեջ։

Դրանով էլ բացատրվում է ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերում բնակչության զբաղվածության կառուցվածքում եղած մեծ տարբերությունը Սովետական Միության և Ամերիկայի Միացյալ Նահանգների միջև։ ՍՍՌՄ-ում 1959 թ. աշխատանքի արտադրողականությունը գյուղատնտեսության մեջ մոտավորապես 3 անգամ ցածր էր, քան ԱՄՆ-ում[1]։ Սոնինի հրապարակած տվյալներով Սովետական Միությունում գյուղատնտեսության մեջ զբաղված բնակչության տեսակարար կշիռը (42%) համարյա 4 անգամ ավելի է, քան բնակչության այդ խմբի տեսակարար կշիռն է ԱՄՆ-ում (11%) այն դեպքում, երբ 1959 թ. ՍՍՌՄ-ը գյուղատնտեսական արտադրության ծավալով հասել էր ԱՄՆ-ի մակարդակի 80%-ին[2]։

---

1 Народное хозяйство СССР в 1959 г. Статистический сборник, стр. 89.

2 Старовский В., О методике сопоставления экономических показателей СССР и США, Вопросы Экономики, 1960, стр. 114.

Այս տվյալները խոսում են այն մասին, որ չնայած քաղաքային բնակչության և արդյունաբերության մեջ զբաղված մարդկանց թվի ավելացման ուղղությամբ եղած տեղաշարժերին և գյուղատնտեսության մեջ զբաղված բնակչության նվազման, ՍՍՌՄ-ի բնակչության կառուցվածքում փոփոխությունները դեռևս դանդաղ են կատարվում։ Հավանաբար կոմունիստական հասարակության ծավալուն կառուցման շրջանում՝ համապատասխան ժողովրդական տնտեսության զարգացման մեծ խնդիրների, այդ պրոցեսը տեղի կունենա ավելի արագ տեմպերով։

Սովետական Միության մեջ ամբողջությամբ վերցրած գյուղական բնակչության տեսակարար կշռի նվազման հետ միաժամանակ նվազում է նրա բացարձակ թիվը՝ 1913 թ. մինչև 1960 թ. այն իջել է մոտավորապես 17%-ով, ըստ որում այդ նվազումը հիմնականում տեղի է ունեցել սկսած 1939 թ.։ Հայկական ՍՍՌ-ում մինչև 1939 թ. գյուղական բնակչության նվազում չի նկատվել, ընդհակառակը, այն մի փոքր ավելացել է։ Սակայն ի տարբերություն ՍՍՌՄ-ի, Հայկական ՍՍՌ-ում 1939 թ. մինչև 1959 թ. գյուղական բնակչությունը քիչ է նվազել, մոտավորապես 3,8%-ով, իսկ 1913 թ. մինչև 1959 թ. միայն 1,6%-ով։

Վերջին 20 տարվա ընթացքում Հայկական ՍՍՌ-ում և ՍՍՌՄ-ում ամբողջությամբ վերցրած, գյուղական բնակչության թվի շարժման մեջ եղած այդպիսի տարբերությունը դերազանցապես բացատրվում է ռեսպուբլիկայի գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության աճի հետ մնալով՝ համեմատած Սովետական Միության միջինի հետ։ Այդ երևում է հետևյալ տվյալներից։

(Աշխատանքի արտադրողականությունը 1958 թ. %-
համեմատած 1950 թ. հետ)

	Կոլխոզներ	Սովխոզներ
ՍՍՌՄ	171	160
Հայկական ՍՍՌ . .	160	70[3]

* * *

Այժմ տեսնենք, թե գյուղատնտեսության մեջ բանվորական ուժի վերարտադրությունը ինչպես է տեղի ունեցել, ինչպիսի փոփոխություններ են կատարվել ռեսպուբլիկայի գյուղատնտեսական արտադրության մեջ զբաղված աշխատողների թվական կազմի մեջ։

Սովխոզների գյուղատնտեսական արտադրության մեջ զբաղված աշխատողների թիվը որոշվում է հիմնական արտադրության մեջ զբաղված աշխատողների միջին տարեկան թվով։

Հայկական ՍՍՌ-ում սովխոզների զարգացման հետևանքով տեղի է ունենում Պետական գյուղատնտեսական ձեռնարկությունների աշխատողների թվի

---

3 Հայկական ՍՍՌ-ի սովխոզներում աշխատանքի արտադրողականության նվազումը բացատրվում է վերջին տարիներս հետ մնացող կոլխոզների բազայի վրա զգալի թվով սովխոզների ֆազմակերպմամբ։

անընդհատ աճ։ Սովխոզների թիվը 1940 թ. մինչև 1959 թ. 14-ից հասել է 82-ի, իսկ սովխոզների աշխատողների թիվը ավելացել է ավելի քան 10 անգամ՝ 2,5 հազարից հասնելով 25,8 հազար մարդու։

Սովխոզների բանվորների և ծառայողների թիվը՝ գյուղատնտեսական օժանդակ ձեռնարկությունների, ՄՏԿ-ների և վերանորոգման կայանների աշխատողների հետ մասին, կազմել է (հազ. մարդ)։

1940 թ.	1950 թ.	1959 թ.
5,7	11,2	30,5

Հանրային տնտեսության մեջ զբաղված աշխատողների թիվը կոլտնտեսություններում չի կարող որոշվել նույն մեթոդով, ինչ ընդունված է սովխոզների համար։ Հանրային արտադրության մեջ զբաղված կոլտնտեսականների միջին-տարեկան թիվը չի ներկայացնում աշխատողների ողջ մասսան, որը զբաղված է կոլտնտեսային արտադրության մեջ։ Գյուղատնտեսական պետական և կոլտնտեսային-կոոպերատիվ ձեռնարկությունների բնույթի տարբերությունը որոշում է նաև նրանցում բանվորական ուժի օգտագործման տարբեր բնույթ։ Սովխոզների աշխատողների թիվը որոշվում է գյուղատնտեսական արտադրության ծավալով, իսկ արտադրության սեզոնային բնույթի դժվարությունները բանվորական ուժի օգտագործման տեսակետից, լուծվում է սեզոնային բանվորներ վարձելով։

Այլ է կոլտնտեսությունում. այստեղ աշխատանքային ռեսուրսների օգտագործումը առաջին հերթին կապված է կոլտնտեսային առկա բնակչության, նրա աշխատունակ մասի, ինչպես և աշխատանքային լարվածության սեզոններին դեռահասների և տարիքն առած կոլտնտեսականների աշխատանքը օգտագործելու հետ։ Կոլտնտեսություններում մեկ աշխատունակ կոլտնտեսականի աշխատանքային օրերի զբաղվածությունը զիջում է սովխոզի մշտական բանվորի զբաղվածությանը։ Հետևաբար չի կարելի կոլտնտեսությունների աշխատողների թիվը որոշել հանրային տնտեսության մեջ բոլոր կոլտնտեսականների միջին-տարեկան թվով (հաշվելով նաև դեռահասներին և հասակավորներին)։ Դա չի լինի կոլտնտեսության աշխատողների լրիվ հաշվառում։ Կոլտնտեսության աշխատանքներին մասնակցող կոլտնտեսականների միջին-տարեկան թիվը կազմում է կոլխոզների հանրային արտադրության մեջ մասնակցած աշխատունակ կոլտնտեսականների միայն 79,4%-ը։ Իհարկե, կոլտնտեսության մեջ աշխատող աշխատունակ կոլտնտեսականների թիվն էլ ճշտորեն չի ցույց տալիս գյուղատնտեսական բնակչության այն կոնտինգենտը, որը ընդգրկում է հանրային տնտեսության աշխատանքների ողջ ծավալը։ Հայտնի է, որ աշխատանքի մի զգալի մասը (1959 թ. 11,6%) կատարում են ոչ աշխատունակ տարիքի կոլտնտեսականները։ Դրա համար էլ, կոլտնտեսություններում աշխատողների թիվը որոշելիս, մենք թույլ ենք տալիս մի փոքր շեղում ֆիզիկական անձանց, կամ միջին-ամսական թվի հաշվառումից և հնարավոր ենք համարում այս արտահայտել միայն լիարժեք աշխատողների հաշվառքային ցուցանիշով։ Վերջինս դուրս է բերված կոլտնտեսությունում բոլոր աշխատած մարդ-օրերի բաժանումից՝ հասարակական արտադրության մեջ մասնակից չափահաս աշխատունակ կոլտնտեսականների աշխատած տարեկան միջին մարդ-օրերի (կամ աշխօրերի) թվի վրա։

Լիարժեք աշխատողների թիվը մոտ է գյուղատնտեսության մեջ բանվորական ուժի միջին-տարեկան պաշարը ներկայացնող աշխատանքային ռեսուրսներ հասկացողությանը։

Ընդունված է աշխատանքային ռեսուրսներ համարել առկա աշխատունակ բնակչությունը և անաշխատունակ տարիքի բոլոր աշխատողներին։ Պ. Պոդյաչիխը աշխատանքային ռեսուրսներ հասկացողությունը հետևյալ կերպ է ձևակերպում. «Երկրի աշխատանքային ռեսուրսները դա աշխատունակ տարիքի բնակչության, տարիքն առած աշխատողների և մինչև 16 տարեկան դեռահասների հանրագումարն է»[4]։ Կ. Ի. Կապուստինն էլ մոտավորապես նույն բնորոշումն է տալիս. «Երկրի աշխատանքային ռեսուրսների մեջ մտնում են՝ բոլոր աշխատունակները (բացի 1-ին և 2-րդ խմբի չաշխատող հաշմանդամների), հանրային արտադրության մեջ աշխատող մինչև 16 տարեկան դեռահասները և տարիքն առած աշխատողները (թոշակային տարիքից ավելին ունեցողներ)»[5]։

Կարելի է արդյոք աշխատանքային ռեսուրսների նման բնորոշումը, որը վերաբերում է երկրի ողջ ժողովրդական տնտեսությանը, ընդունելի համարել նաև գյուղատնտեսության, կոլտնտեսությունների համար։

Պետական ձեռնարկություններում ինչպես աշխատունակները, այնպես էլ անաշխատունակները՝ որպես կանոն, աշխատում են ամբողջ տարվա ընթացքում։ Բացի դրանից, արդյունաբերության մեջ, շինարարությունում և այլ բնագավառներում դեռահասների աշխատանքը չափազանց սահմանափակ է։

Գյուղատնտեսության մեջ հասակավորների և մանավանդ դեռահասների աշխատանքը առավել կամ նվազ չափով կրում է սեզոնային բնույթ։ Այսպես. օրինակ, 12—16 տարեկան դեռահասները գերազանցապես գյուղական դպրոցի սովորողներ են և կոլխոզային աշխատանքներին մասնակցում են միայն ամառային արձակուրդների ժամանակ։ Դրա համար էլ գյուղատնտեսության մեջ աշխատունակների հետ միասին բոլոր նրանց, ովքեր այս կամ այն կերպ, անկախ տարիքից, աշխատում են հանրային արտադրության մեջ՝ աշխատանքային ռեսուրսների մեջ մտցնելը ճիշտ չէ։ Մեզ թվում է, որ գյուղատնտեսության մեջ բանվորական ուժի միջին տարեկան պաշարի որոշման ժամանակ նպատակահարմար է բնակչության անաշխատունակ խմբի աշխատանքի ծախսումը համապատասխանեցնել աշխատունակ կոլխոզնիկների աշխատանքի ծախսման հետ, այսինքն նրանց վերածել պայմանական աշխատունակների (լիարժեք աշխատողների)։ Հավանաբար գյուղատնտեսության մեջ բանվորական ուժի միջին տարեկան պաշարի այդպիսի որոշումը ըստ էության մոտ կլինի աշխատանքային ռեսուրսներ հասկացողությանը, որը տրված է վերը բերված բնորոշումներում։ Իհարկե, կոլտնտեսությունների աշխատանքային ռեսուրսները լրիվ չափով որոշելու համար լիարժեք աշխատողների թվին պետք է ավելացնել աշխատունակ կոլտնտեսականների այն մասը, որը ընդհանրապես մասնակցություն չի ունեցել կոլխոզային աշխատանքներին՝ բացառությամբ այն մարդկանց, որոնք մշտապես զբաղված են ժողովրդական տնտեսության այլ ճյուղերում։

---

[4] П. Подьячих, Трудовые ресурсы СССР, журнал «Социалистический труд», 1961, № 2.

[5] Справочные материалы по труду и заработной плате под редакцией Е. П. Капустина.

Ինչ վերաբերում է գյուղատնտեսական աշխատանքների առավել եռուն շրջանում աշխատանքային ռեսուրսների որոշմանը, ապա բանվորական ուժի պաշարի մեջ կարելի է մտցնել ամառային շրջանում աշխատող բոլոր հասակավորներին և դեռահասներին։

Որպեսզի հետևենք գյուղատնտեսության մեջ զբաղված աշխատողների թվի շարժմանը, մենք օգտվում ենք ինչպես լրիվ աշխատողի ցուցանիշից, այնպես էլ կոլտնտեսությունների աշխատողների միջին-տարեկան թվից (համեմատելու համար ողջ ՍՍՌՄ-ի դինամիկայի հետ)՝ սովխոզների և այլ գյուղատնտեսական ձեռնարկությունների աշխատողների միջին-տարեկան թիվը միասին վերցրած։

Գյուղատնտեսության մեջ զբաղված աշխատողների թիվը (Հայկական ՍՍՌ-ում)

Տարիներ	Ընդամենը միջին-տարեկան աշխատողներ		Ընդամենը լրիվ աշխատողներ		Ընդամենը միջին-տարեկան աշխատողներ ՍՍՌՄ-ում	
	հազար մարդ	% համեմատած 1940 թ. հետ	հազար մարդ	% համեմատած 1940 թ. հետ	միլիոն մարդ	% համեմատած 1940 թ. հետ
1940	251,9	100,0	350,6	100,0	31,3	100,0
1946	226,0	89,7	313,1	89,3	×	×
1950	216,0	85,7	295,5	84,2	30,7	98,0
1953	200,4	79,6	279,8	78,1	29,4	93,9
1955	207,0	82,1	300,2	85,6	30,7	98,0
1956	208.9	82,9	312,6	89,1	31,5	100,6
1957	208,6	82,8	317,3	90,5	30,9	98,7
1958	204,6	91,2	300,6	85,7	30,8	98,4
1959	203,6	90,8	295,2	82,6	29,9	95,5

Եթե Հայկական ՍՍՌ-ում 1940 թ. մինչև 1959 թ. գյուղական ողջ բնակչության թիվը մեծ փոփոխությունների չի ենթարկվել, ապա գյուղատնտեսության մեջ զբաղված աշխատողների թիվը այդ ժամանակաշրջանում նկատելի նվազել է։ Միայն 1953 թ. Սեպտեմբերյան պլենումից հետո, գյուղատնտեսական արտադրության վերելքի հետ կապված, այդ բնագավառում նկատելի է աշխատողների թվի աճ (մինչև 1957—1958 թթ.)։ Վերջին երկու տարիների ընթացքում նկատվում է նորից գյուղական բնակչության ընդհանուր աճի հետ միասին, գյուղատնտեսության մեջ զբաղված աշխատողների թվի նվազման տենդենց։ Այս հակադիր տենդենցը բացատրվում է նրանով, որ գյուղական բնակչության աճը տեղի է ունենում ոչ թե գյուղատնտեսական արտադրության մեջ անմիջապես աշխատողների և նրանց ընտանիքի անդամների թվի հաշվին, այլ ոչ գյուղատնտեսական բնակչության հաշվին։ Վերջին տարիներին գյուղական ավելցուկ բնակչության մի զգալի մասը, ռեսպուբլիկայի շրջաններում արդյունաբերության և շինարարության զարգացման հետևանքով, աշխատանքի է անցնում այլ ճյուղերում՝ կամ անմիջական բնակության վայրում, կամ մոտիկ բնակավայրերում։

Մյուս կողմից, գյուղական վայրերում բնակչությունն ավելանում է կուլտուրայի, լուսավորության, առողջապահության, առևտրի և այլ բնագավառներում աշխատողների հաշվին։

1953 թ. մինչև 1959 թ. գյուղական վայրերում ապրող, բայց ոչ գյուղատնտեսական աշխատանքներով զբաղված բնակչությունը աճել է մոտ 2 անգամ և մոտավոր հաշվումներով կազմում է 90 հազար մարդ։ Բացի դրանից, 1959 թ. աշխատունակ կոլխոզնիկներից 30,8 հազար հոգի աշխատել են հանրային տնտեսությունից դուրս, մինչդեռ 1946 թ. այդպիսիների թիվը կազմել է միայն 9,9 հազար մարդ։

Կոլխոզային և սովխոզային ողջ բնակչության թիվը (վերջինս հաշվարկումներով) 10%-ով պակաս է ամբողջ գյուղական բնակչության թվից, իսկ եթե համեմատելու լինենք միայն աշխատունակ տարիքի մարդկանց հետ, ապա այդ պակասը կհասնի 20%-ի։

Պարտիայի կողմից ծայրամասերի ինդուստրիալ զարգացման քաղաքականության իրականացումը աստիճանաբար վերացնում է գյուղի և քաղաքի տարբերությունը, իսկ «գյուղական բնակչություն» հասկացողությունը աստիճանաբար կորցնում է իր նշանակությունը։ Բնակչության բաժանումը քաղաքային և գյուղականի այլևս չի համապատասխանում սոցիալ-տնտեսական այն տեղաշարժերին, որոնք տեղի են ունենում հասարակության սոցիալիզմից կոմունիզմին անցնելու շրջանում։ Սովետական Միության մեջ հավանաբար կպահանջվի բնակչության բաժանման նոր ձևեր և հաշվառում։

* * *

Ժողովրդական տնտեսության մեջ զբաղված աշխատողների թվի շարժումը ցույց է տալիս բանվորական ուժի ընդլայնված վերարտադրության միայն քանակական փոփոխությունները։ Մինչդեռ, բանվորական ուժի ընդլայնված վերարտադրությունը քանակային փոփոխություններից բացի ենթադրում է նաև որակյալ բանվորական ուժի աճ, որը իր տեմպով առաջ է անցնում աշխատողների ընդհանուր թվի աճից, քանի որ տեխնիկական պրոգրեսը, կուլտուրայի զարգացումը պահանջում են մարդու կողմից ծախսված աշխատանքի որակի բարձրացում։ Շատ մեծ նշանակություն ունի որակյալ բանվորական ուժի վերարտադրությունը գյուղատնտեսության մեջ, որտեղ, որպես կանոն, բանվորական ուժի քանակային վերարտադրությունը տեղի է ունենում կամ անփոփոխ մակարդակի վրա, կամ ավելի փոքր չափերով, քան նախորդ ցիկլը։

Գյուղատնտեսության մեջ որակյալ բանվորական ուժի ընդլայնված վերարտադրությունը առաջին հերթին արտահայտվում է բարձրագույն և միջնակարգ կրթությամբ մասնագետների քանակի ավելացմամբ և մեխանիզատորական կադրերի աճով։

ՍՍՌՄ-ի կոլտնտեսություններում, ՄՏ կայաններում, ՎՏ կայաններում, սովխոզներում և պետական օժանդակ տնտեսություններում աշխատող բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցող մասնագետների քանակը 1941 թ. հունվարի 1-ից մինչև 1959 թ. աճել է ավելի քան 7 անգամ՝ 50 հազարից հասնելով 366 հազարի։ Այդ ժամանակաշրջանում նշանակալից չափով աճել է նաև մեխանիզատորական կադրերի թիվը՝ տրակտորիստներ, տրակտորային բրիգադների բրիգադիրներ և բրիգադիրների օգնականներ,

կոմբայնավարներ և վարորդներ՝ 1,4 միլիոնից հասնելով 2,4 միլիոն մարդու։ Այդ նույն ժամանակաշրջանում Հայկական ՍՍՌ-ի գյուղատնտեսության մեջ նույնպես բավականին աճել է որակյալ բանվորական ուժը։ Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողների թիվը ռեսպուբլիկայում 1940—1959 թ. ընթացքում աճել է ավելի քան երեք անգամ՝ հասնելով 3,9 հազար մարդու, մեխանիզատորների թիվը 1959 թ. հասել է 9,5 հազար մարդու։ Հետաքրքրական է ողջ ՍՍՌՄ-ի և Հայկական ՍՍՌ-ի միջև՝ գյուղատնտեսության աշխատողների տարեկան միջին ամսական 1000 հոգուն ընկնող որակյալ աշխատողների թվի համեմատությունը։ Ողջ ՍՍՌՄ-ում մեխանիզատորների գծով դրանց թիվը (80) գերազանցում է Հայկական ՍՍՌ-ի համապատասխան ցուցանիշին (48)։ Դա բացատրվում է ողջ ՍՍՌՄ-ի մասշտաբով գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման առավել բարձր մակարդակով։ Այսպես, ՍՍՌՄ-ում, ամբողջությամբ վերցրած, սովխոզներում, կոլխոզներում և ՎՏ կայաններում 1959 թ. մեկ աշխատողին ընկել է 4,7 ձիու ուժ էներգիա-հզորություն, իսկ Հայկական ՍՍՌ-ում միայն 3,5։ Դրանից բացի նշանակություն ունի նաև Հայկական ՍՍՌ-ի գյուղատնտեսական արտադրության և Սովետական Միության գյուղատնտեսական գոտիների մեծ մասի մասնագիտացման տարբերությունը. Հայկական ՍՍՌ-ում կան հողագործության շատ ճյուղեր, որտեղ մեծ մասամբ կիրառվում է ձեռքի աշխատանքը (խաղողագործություն, ծխախոտագործություն)։

Միանգամայն այլ պատկեր է, երբ նայում ենք գյուղատնտեսության մեջ 1000 աշխատողին ընկնող բարձրագույն և միջնակարգ կրթությամբ մասնագետների համեմատությանը ՍՍՌՄ-ում և Հայկական ՍՍՌ-ում։ Եթե ՍՍՌՄ-ում 1000 հոգուն ընկնող ագրոզոոտեխնիկական մասնագետների թիվը 12 է, ապա Հայկական ՍՍՌ-ում 19 է։ Այդ բացատրվում է նրանով, որ ռեսպուբլիկայում կա երկու բարձրագույն ուսումնական հաստատություն՝ գյուղատնտեսական և անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտները։ Բացի դրանից, Հայկական ՍՍՌ-ն բնութագրվում է գյուղատնտեսական արտադրության առանձնապես ուժեղ արտահայտված բազմաճյուղությամբ, որը պահանջում է տարբեր մասնագիտությունների որակյալ կադրերի առկայություն։

Գյուղատնտեսության և այլ ճյուղերի որակյալ բանվորական ուժի վերարտադրության հետ կապված հարցերի ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ նաև այն աշխատողների կոնտինգենտը, որոնք չունեն մասնագիտական կրթություն և չեն պատկանում մեխանիզատորական կադրերին, բայց իրենց գործի բարձրորակ մասնագետներ են։ Տնտեսության շատ ճյուղերում՝ խաղողագործություն, ծխախոտագործություն և այլն, որտեղ չի կիրառվում աշխատանքի լայն մեքենայացում, չհաշված մասնագետ գյուղատնտեսներին, ագրոտեխնիկներին, աշխատում են մասնագետ-պրակտիկներ, ինչպես և շատ կոլտնտեսականներ, սովխոզների բանվորներ։ Այստեղ նկատի է առնվում հենց գյուղատնտեսության աշխատողների մեջ կատարված որակական փոփոխությունները, փոփոխություններ, որոնք տեղի են ունեցել բնակչության ընդհանուր կուլտուրական մակարդակի և գյուղատնտեսության արտադրության բնագավառում նրա գիտելիքների բարձրացման հետևանքով։

Այսպիսով, գյուղատնտեսության մեջ բանվորական ուժի վերարտադրության բնագավառում առկա են որակական նշանակալի փոփոխություններ, որոնք առաջին հերթին արտահայտվում են բարձրորակ աշխատողների ընդ-

լայնված վերարտադրությամբ։ Որակական այդ փոփոխությունները լրիվ հաշվառել հնարավոր չէ, բայց նրանք իրենց մարմնավորումն են գտնում հենց բուն գյուղատնտեսական և ողջ հանրային արտադրության մեջ։

* * *

Ժողովրդական տնտեսության բանվորական ուժի պահանջները սերտորեն կապված են հասարակական արտադրությունը աշխատանքային ռեսուրսներով համալրելու աղբյուրների ու ձևերի հետ։ Հասարակական արտադրությունը բանվորական ուժով համալրելու հիմնական աղբյուրը հանդիսանում է բնակչության՝ բանվոր դասակարգի, գյուղացիության և ինտելիգենցիայի վերարտադրությունը։

Լենինը ցույց է տվել, որ Ռուսաստանում, ոչ միայն ռեֆորմյան շրջանում, այսինքն ճորտատիրական իրավունքի քայքայման շրջանում, այլ նաև ավելի ուշ, կապիտալիզմի զարգացման շրջանում, քաղաքային բնակչության աճի և պրոլետարիատի շարքերի համալրման հիմնական աղբյուրը հանդիսանում է գյուղացիության քայքայվող մասը։ Լենինը գրել է. «Այսպես, ուրեմն, քաղաքային բնակչության տոկոսը շարունակ աճում է, այսինքն՝ բնակչությունը հողագործությունից դեպի առևտրա-արդյունաբերական զբաղմունքներն է քաշվում»[6]։ Բանվոր դասակարգի ձևավորման շրջանում նրա համալրման մյուս աղբյուրը Կ. Մարքսը և Վ. Ի. Լենինը համարում էին մանր արհեստավորներին և տնայնագործներին։ Կապիտալիզմի զարգացման և բանվոր դասակարգի աճման ժամանակ պրոլետարիատի շարքերի համալրման նոր նշանակալից աղբյուրը դառնում է հենց իր բանվոր դասակարգի վերարտադրությունը։

Սոցիալիստական հասարակության մեջ բանվոր դասակարգի համալրման որոշ սոցիալական աղբյուրներ ըստ ձևի պահպանվում են, սակայն բովանդակությամբ նրանք էապես տարբերվում են կապիտալիզմի ժամանակ գոյություն ունեցող բանվորական ուժի վերարտադրությունից։ Միանգամայն փոխվում են բանվոր դասակարգի և գյուղացիության մեջ եղած հարաբերությունները՝ որպես դասակարգերի, աստիճանաբար վերանում է տարբերությունը նրանց միջև, վերացվում է քաղաքի և գյուղի միջև դարերով գոյություն ունեցող հակադրությունը։

Սոցիալիստական կարգի պայմաններում կոլխոզային գյուղացիությունը դեռևս երկար ժամանակ մնում է որպես բանվոր դասակարգի համալրման գլխավոր աղբյուր՝ արդյունաբերությունը, շինարարությունը և ժողովրդական տնտեսության այլ ճյուղերը ապահովելով աշխատանքային ռեսուրսներով։ Կոլխոզային գյուղացիությունը վերարտադրվելով բացառապես իր հաշվին, միաժամանակ, գյուղատնտեսության մեջ բանվորական ուժի վերարտադրության վերը նշած առանձնահատկությունների շնորհիվ, ակտիվորեն մասնակցում է բանվոր դասակարգի և ինտելիգենցիայի ընդլայնված վերարտադրությանը։

Արտադրողական ուժերի արագ զարգացման, քաղաքների և նրանց բնակչության աճման հետևանքով աստիճանաբար աճում են ժողովրդական տնտեսության բանվորական ուժի համալրման աղբյուրները և ռեզերվները՝ ի հա-

---

6 Լենին, հատոր III, էջ 724։

շիվ ոչ գյուղատնտեսական բնակչության։ Միաժամանակ բանվոր դասակարգի և քաղաքային բնակչության այլ խավերի վերարտադրության մեջ իջնում է գյուղական բնակչության բաժինը։ Այնուամենայնիվ, բանվորական ուժի վերաբաշխումը գյուղատնտեսության և արդյունաբերության միջև պահպանում է իր մեծ նշանակությունը երկրի արտադրողական ուժերի զարգացման համար։ Դրա համար էլ կարևոր նշանակություն ունեն ժողովրդական տնտեսությունը բանվորական ուժով համալրելու աղբյուրների ճշգրիտ հաշվառումը, բնակչության այն դասակարգերի և խմբերի գերի և տեղի բացահայտումը, որոնք մասնակցում են բանվորական ուժի վերարտադրությանը, բանվորական ուժի ավելցուկի առաջացման հատկանիշները՝ տերիտորիալ, սեռային, տարիքային առումով։ Այդ ամենը նպաստում, օգնում է ժողովրդական տնտեսության զարգացման ճշգրիտ հարաբերակցությունների որոշմանը՝ նրա ճյուղային և տերիտորիալ տեսանկյունով։

Փորձենք որոշել Հայկական ՍՍՌ-ում վերջին 10 տարվա ընթացքում գյուղատնտեսության մասնակցության բաժինը ժողովրդական տնտեսության այլ ճյուղերը բանվորական ուժով համալրելու գործում։

1950 թվականից ժողովրդական տնտեսության մեջ գոյություն ունեն աշխատողների միջին-տարեկան թվի հետևյալ ցուցանիշները։

(Առանց գյուղատնտեսության մեջ զբաղվածների) հազար մարդ

Տարիներ	Ընդամենը	Տարեկան աճը
1950	222,5	—
1951	226,1	13,6
1952	243,3	7,2
1953	251,7	8,4
1954	268,3	16,6
1955	268,3	—
1956	285,8	17,5
1957	311,8	26,0
1958	332,8	21,0
1959	345,5	21,7

Այսպիսով, 1950 թ. մինչև 1959 թ., ամբողջությամբ վերցրած, ժողովրդական տնտեսության մեջ (առանց գյուղատնտեսության) զբաղված աշխատողների աճը կազմել է 132,0 հազար մարդ։

Այժմ տեսնենք, թե գյուղական բնակչության վերջին 10 տարում ունեցած բնական աճի որ մասն է մնացել գյուղում և որ մասն է բնակության անցել քաղաք կամ քաղաքատիպ ավաններ։ Այդ պատկերացում կտա բանվորական ուժի գյուղատնտեսությունից արդյունաբերություն և ժողովրդական տնտեսության այլ ճյուղեր տեղափոխվելու չափերի մասին։

Վերջին տասը տարում ռեսպուբլիկայի գյուղական բնակչությունը ավելացել է 127,2 հազարով, որը տալիս է տարեկան 1,5% աճ։ Եթե բնակչությունը հաշվենք փաստական բնական աճով, ապա 127,2 հազար մարդուց բացի մենք կու-

նենանք 150,4 հազար մարդու լրացուցիչ աճ. դա գյուղական բնակչության աճի այն մասն է, որ քննարկվող ժամանակաշրջանում թողել է գյուղը։ Այսպիսով, գյուղական բնակչության 277,6 հազար մարդ ընդհանուր բնական աճի 45,1% մնացել է գյուղում, իսկ 54,9% տեղափոխվել է քաղաք, կամ ռեսպուբլիկայից դուրս գյուղական վայրեր։

ՍՍՌՄ-ում բնակչության մեխանիկական շարժման վերաբերյալ տվյալները հիմք են տալիս ենթադրելու, որ գյուղից տեղափոխված բնակչության ճնշող մեծամասնությունը մնացել է ռեսպուբլիկայում և միայն ընդհանուր թվի 10%-ից ոչ ավելի մասն է թողել նրա սահմանները։

Տեղափոխված աշխատողների թվի որոշման ժամանակ, կոլխոզներում ընտանիքների աշխատող և չաշխատող անդամների փաստական հարաբերությունը՝ 1-ը 1,5-ի, չի կարելի հիմք ընդունել, քանի որ շատ դեպքերում տեղափոխվում են ոչ թե ամբողջ ընտանիքներով, այլ փոխադրվում են ընտանիքի առանձին աշխատունակ անդամները միայն։ Այդ բանը հաշվի առնելով, հաշվումներում ընդունվել է 1-ը 1-ի հարաբերությունը։ Այս դեպքում ռեսպուբլիկայի քաղաքները տեղափոխված 99,5 հազար մարդուց (ժողովրդական տնտեսության աշխատողների աճի հետ համեմատելու համար վերցվում է վերջին 9 տարին, առանց 1950 թ. և ռեսպուբլիկայի սահմաններից դուրս եկած 10%-ի, 49,8 հազարը կլինեն աշխատողները։ Հետևաբար, ժողովրդական տնտեսության մեջ աշխատողների 132,0 հազար ընդհանուր աճից (չհաշված գյուղատնտեսությունը) 49,8 հազարը, կամ 37,7 տոկոս, գյուղից տեղափոխվածներ են, իսկ 82,2 հազարը, կամ 62,3 տոկոս այն համալրումն է, որը ստացվել է հենց բանվոր դասակարգի կամ քաղաքային բնակչության այլ խավերի վերարտադրությունից։

Կարծում ենք, որ վերը բերված հաշվարկումները համոզիչ կերպով ցույց են տալիս, թե վերջին տարիների ընթացքում Հայկական ՍՍՌ-ում, շնորհիվ քաղաքների և նրանց բնակչության աճի, ոչ գյուղատնտեսական ճյուղերում աշխատանքային ռեսուրսները մեծ մասամբ վերարտադրվում են բանվոր դասակարգի և ինտելիգենցիայի հաշվին, իրենց սեփական հիմքի վրա, չնայած այն բանին, որ գյուղատնտեսությունը դեռևս նշանակալից տեղ է գրավում արդյունաբերության, շինարարության և ժողովրդական տնտեսության այլ ճյուղերում՝ բանվորական ուժի վերարտադրության գործում։

Ժողովրդական տնտեսության ոչ գյուղատնտեսական ճյուղերը բանվորական ուժով համալրելու գործում գյուղատնտեսության դերի աստիճանական նվազման ընդհանուր տենդենցի ժամանակ հետաքրքրական է հետևել, թե այդ պրոցեսը ինչպես է տեղի ունեցել քննարկվող վերջին տասը տարիների ընթացքում։ Համեմատության համար վերցնում ենք 3 էտապ՝ երեքական տարիներով՝ 1951—1953, 1954—1956, 1957—1959 թթ.։ Առաջին շրջանը դա ՍՄԿՊ ԿԿ 1953 թ. Սեպտեմբերյան պլենումին անմիջապես նախորդող տարիներն են, երկրորդ և երրորդ շրջանը դա գյուղատնտեսության մեջ մի շարք կարևոր միջոցառումների իրականացման շրջանն է, երբ ապահովվեցին գյուղատնտեսության զարգացման արագ տեմպերը։

Գյուղական բնակչության աճի բաշխումը ըստ եռամյակների հետևյալ պատկերն է ներկայացնում (տոկոսներով).

Տարիները	Ողջ աճի համեմատությամբ		Ընդամենի նկատմամբ	
	գյուղում մնացածները	տեղափոխվածները	գյուղում մնացածները	տեղափոխվածները
1951—1953	18.4	81.6	8,8	52,1
1954—1956	84,4	15,6	48,1	11,9
1957 - 1959	61,5	38,5	43,1	36,0
Ընդամենը 9 տարվա ընթացքում	57,3	42,7	100,0	100,0

Քննարկվող ժամանակաշրջանում (եռամյակներով) ժողովրդական տնտեսության բանվորական ուժի համալրման գործում գյուղատնտեսության դերի մասին անմիջական պատկերացում է տալիս մի կողմից գյուղատնտեսությունից քաղաք տեղափոխված աշխատողների, մյուս կողմից ժողովրդական տնտեսության մեջ (չհաշված գյուղատնտեսությունը) զբաղված աշխատողների աճի համեմատությունը.

Տարիները	Ժողովրդական տնտեսությունում զբաղված աշխատողների աճ, հազար	Այդ թվում		Տոկոսներով			
		գյուղատնտեսությունից դուրս գտնվող տարածքներից տեղափոխված բանվորների հաշվին	գյուղատնտեսության հաշվին	ողջ աճի համեմատությամբ		ընդամենի նկատմամբ	
				գյուղատնտեսությունից դուրս գտնվող տարածքներից տեղափոխված բանվորներ	գյուղատնտեսության հաշվին	գյուղատնտեսությունից դուրս գտնվող տարածքներից տեղափոխված բանվորներ	գյուղատնտեսության հաշվին
1951—1953	29,2	26,0	3,2	89,1	10,9	52,0	3,9
1954—1956	34,1	5,9	28,2	17,3	82,7	11,9	34,4
1957 - 1959	68,7	17,9	50.8	26,1	73,9	36,1	61,7
Ընդամենը 9 տարում	132,0	49,8	82,2	37,7	62,3	100,0	100,0

Առաջին ժամանակաշրջանը հաջորդ էտապներից տարբերվում է գյուղական բնակչության շատ աննշան աճով։ Նրա ընդհանուր բնական աճի 81,6%-ը տեղափոխվել է քաղաք և միայն 18,4%-ն է մնացել գյուղում։ Այդ շրջանի համար բնութագրական են ռեսպուբլիկայի գյուղատնտեսության զարգացման շատ ցածր տեմպերը, այնպիսի կարևոր ճյուղի խիստ հետ մնալը, ինչպիսին անասնապահությունն է, կոլտնտեսականների աշխատանքի համեմատաբար ցածր վարձատրությունը, որը զիջում էր գյուղատնտեսության մեջ աշխատանքի վարձատրության հասարակականորեն անհրաժեշտ միջին մակարդակին։

Այդ տարիներին արդյունաբերությունը շարունակում էր զարգանալ արագ տեմպերով, կատարվում էր արդյունաբերական և այլ ձեռնարկությունների մեծ շինարարություն։ Այդ երկու գործոնները՝ մի կողմից գյուղատնտեսության մեջ արտադրության արագ ավելացման անհրաժեշտ խթանների բացակայությունը

և դրա հետ կապված բանվորական ուժի առաջացող ավելցուկի ներգրավումը արտադրության մեջ, մյուս կողմից քաղաքների արագ աճը և արդյունաբերության զարգացումը, որը պահանջում էր լրացուցիչ բանվորական ուժ, ստեղծում էին նախադրյալներ և համապատասխան պայմաններ՝ գյուղական բնակչությանը քաղաք տեղափոխելու համար։

Երկրորդ շրջանում 1954—1957 թթ. դրությունը փոխվում է։ Խիստ կրճատվում է գյուղատնտեսությունից բնակչության տեղափոխությունը արդյունաբերության մեջ, ընդ որում 1954 և 1955 թթ. գյուղական բնակչության ավելացումը գերազանցում է նրա բնական աճը։ Հետևաբար այդ երկու տարիների ընթացքում տեղի է ունեցել ոչ թե գյուղական բնակչության տեղափոխություն քաղաք, այլ, ընդհակառակը, տեղափոխություն քաղաքից դեպի գյուղ։ Նախորդ տարիներին քաղաք տեղափոխված բնակչության մի մասը վերադառնում էր կոլտնտեսություն։ Այդպիսի երևույթը 1954—1955 թթ. համար միանգամայն օրինաչափ էր։ ՍՄԿՊ ԿԿ 1953 թ. Սեպտեմբերյան պլենումի պատմական որոշումներից հետո բացահայտվել էին մեծ հեռանկարներ երկրի գյուղատնտեսության վերելքի համար։ Հայկական ՍՍՌ-ում ևս արագորեն սկսեց տեղի ունենալ գյուղատնտեսական արտադրության ավելացման տեմպերի աճ։ Նշանակալից չափով բարձրացավ կոլտնտեսականների կյանքի նյութական մակարդակը։ Աշխատանքի վարձատրումը կոլտնտեսություններում երեք տարվա ընթացքում՝ 1953—1956 թթ. բարձրացավ ավելի քան 30%-ով։ Չնայած այդ շրջանում արագորեն զարգանում էին նաև արդյունաբերությունն ու շինարարությունը, սակայն, գյուղատնտեսությունից դեպի այդ ճյուղերը բանվորական ուժի տեղափոխումը խիստ կրճատվում է, կազմելով ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվորական ուժի աճի միայն 17,3%-ը։ Փաստորեն, ինչպես այդ մասին արդեն հիշատակվել է, տեղափոխությունը տեղի է ունեցել միայն 1956 թ.։

Երրորդ էտապը (1957—1959)՝ բանվորական ուժի ավելցուկի բաշխման հարցում զգալիորեն տարբերվում է նախորդ շրջաններից։ Վերջին եռամյակում նկատելիորեն ավելանում է գյուղական բնակչության բնական աճը և նրա մեծ մասը՝ 61,5%-ը մնում է գյուղում, իսկ 38,5%-ը տեղափոխվում է քաղաք։ Շարունակվում է գյուղատնտեսության 1954 թ. սկսած վերելքը, չնայած ինչպես նշվեց 1961 թ. Հունվարյան պլենումում, այդ վերելքը վերջին տարիներին մի փոքր դանդաղել է։ Այս շրջանում նկատելիորեն ավելանում է ժողովրդական տնտեսության մեջ զբաղված աշխատողների թիվը. 1957—1959 թթ. այն գերազանցել է նախորդ երկու եռամյակների աճը միասին վերցրած։ Այս բանում նկատելի է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի, մասնավորապես արդյունաբերության հետագա վերելքը։ Ժողովրդական տնտեսության մեջ (չհաշված գյուղատնտեսությունը) զբաղված աշխատողների ընդհանուր աճից 1957—1959 թթ. 68,7 հազար մարդ, կամ 26,1%-ը գյուղատնտեսությունից փոխադրված աշխատողներ են, իսկ 73,9%-ը կազմում է քաղաքային բնակչությունը։

Այսպիսով, ժողովրդական տնտեսության մեջ բանվորական ուժի համալրման գործում գյուղատնտեսության մասնակցության օրինաչափ աստիճանական նվազման պայմաններում, առանձին էտապներում գյուղատնտեսության դերը խիստ տատանվում և փոփոխվում է։ Տարբեր գործոնների ազդեցության հետևանքով, առաջին հերթին կապված գյուղատնտեսության դրության և նրա

զարգացման հետ, երբեմն ժամանակավորապես խախտվում են քաղաքի և գյուղի միջև բանվորական ուժի վերաբաշխման հաստատված ընդհանուր օրինաչափությունները։

Հայկական ՍՍՌ-ի գյուղատնտեսությունից բանվորական ուժի տեղափոխության հարցերը քննարկելիս անհրաժեշտ է նկատի ունենալ նրա առանձնահատկությունները՝ որպես ազգային ռեսպուբլիկայի, որում բնակչության աեղաբաշխումը տարբեր ճյուղերի միջև տեղի է ունենում իր սեփական տերիտորիայի սահմաններում։

Հայկական ՍՍՌ-ի, ինչպես և մի քանի այլ միութենական ռեսպուբլիկաների համար բանվորական ուժի ավելցուկի օգտագործման հնարավորությունը վերաբնակեցման կարգով այլ ռեսպուբլիկաների, մարզերի և երկրամասերի արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ հետագայում ևս, համարյա, ամբողջովին բացառված է։

Այսպիսով, եթե աշխատանքային ռեսուրսների համեմատությունը և նրանց օգտագործումը ըստ ՍՍՌՄ-ի առանձին տերիտորիալ միավորների՝ մարզերի, երկրամասերի և ռեսպուբլիկաների, ցույց է տալիս, որպես կանոն, աշխատանքային ռեսուրսների ավելցուկ կամ պակաս ու բանվորական ուժը առանձին շրջանների (մարզերի, երկրամասերի) միջև բաշխելու անհրաժեշտություն է առաջ բերում, ապա այնպիսի ազգային ռեսպուբլիկաների նկատմամբ, ինչպիսին է, ասենք, Հայկական ռեսպուբլիկան, այդպիսի միջոցառումը հնարավոր չէ իրականացնել։

Հայկական ՍՍՌ-ում բանվորական ուժի բալանսի կազմելու արդյունքները, այդ թվում գյուղատնտեսության մեջ աշխատանքի բալանսի արդյունքները և այդ ճյուղում բանվորական ուժի ավելցուկի հայտնաբերումը կարող են հանգեցնել այն միակ ճիշտ եզրակացությանը, որ անհրաժեշտ է ողջ ժողովրդական տնտեսության և նրա ճյուղերի զարգացման այնպիսի պլանավորում, որը կապահովեր ռեսպուբլիկայի բնակչության զբաղվածությունը իր տերիտորիայում։

Այդ դեպքում պլանավորման ժամանակ հեռանկարում պետք է նկատի ունենալ Հայկական ՍՍՌ-ի ազգաբնակչության ընդլայնված վերարտադրության բարձր տեմպերը և մասնավորապես գյուղական բնակչության նշանակալից բնական աճը։

* * *

Քաղաքի և գյուղի միջև բանվորական ուժի բաշխումը, հավանաբար, ինչ որ չափով պայմանավորված է կոլտնտեսականների նյութական շահագրգռվածությամբ, գյուղատնտեսության մեջ աշխատանքի վարձատրության պայմաններով և մակարդակով։

Գյուղատնտեսական այն գոտիներում, շրջաններում, կոլխոզներում, որտեղ կոլտնտեսականների աշխատանքի վարձատրման միջին մակարդակը և օժանդակ տնտեսությունից ու անհատական սեփականություն հանդիսացող անասուններից ստացվող եկամուտները զիջում են արդյունաբերության, շինարարության և այլ բնագավառներում աշխատող բանվորների միջին աշխատավարձի մակարդակին, բանվորական ուժի վերաբաշխումը (ինչպես պլանային, այնպես էլ ոչ պլանային կարգով), այսինքն կոլխոզնիկների տեղափոխությունը աշխատանքի՝ արդյունաբերության մեջ, տեղի է ունենում ինտեն-

սիվ, առանց դժվարությունների։ Նյութական խթանն այստեղ նպաստում է բանվորական ուժի վերաբաշխմանը քաղաքի և գյուղի միջև, կոլխոզնիկներին կտրում իրենց ամրացած տեղից, անհատական օժանդակ տնտեսությունից։

Հայկական ՍՍՌ-ում այդպիսի վիճակ գոյություն ունի լեռնային շատ շրջաններում։ Այսպես, օրինակ, Հրազդանի, Սևանի, Կիրովականի, Զանգեզուրի և մի քանի այլ շրջաններում արդյունաբերության զարգացումը հանգեցնում է բանվորական ուժի գյուղատնտեսությունից դեպի այլ ճյուղեր արագ աշխատանքի անցնելուն։ Այդ պրոցեսը, հիմնականում լինելով դրական՝ կապված լինելով ռեսպուբլիկայի արտադրողական ուժերի զարգացման հետ, որոշ դեպքերում ստանում է այնպիսի չափեր, որ բացասաբար է անդրադառնում գյուղատնտեսական արտադրության վրա։

Ախտայի և Սևանի շրջաններում հանրային արտադրության մեջ կոլտնտեսականների մասնակցության և կոլտնտեսություններից դուրս նրանց աշխատանքի ցուցանիշների համեմատությունը Արարատյան հարթավայրի կոլտնտեսությունների համապատասխան ցուցանիշների հետ, լիովին հաստատում է այդ երևույթը։ Այսպես, 1959 թ. Հրազդանի շրջանում առկա աշխատունակ կոլխոզնիկների 63,6%-ը աշխատել է կոլտնտեսություններում, իսկ 31,5%-ը աշխատել է կոլխոզից դուրս. Սևանի շրջանում համապատասխանաբար այդ տոկոսը կազմել է 62,3 և 26,8, իսկ Արարատյան դաշտավայրի կոլխոզներում՝ 83,1 և 8,8։

Լեռնային շրջանների առանձին կոլտնտեսություններում հանրային արտադրության մեջ աշխատող կոլխոզնիկների տոկոսը շատ ավելի քիչ է և համեմատած 1955 թ. հետ, բավականին նվազել է։ Սևանի շրջանի Վարսեր գյուղի կոլխոզում հանրային արտադրության մեջ աշխատողների տոկոսը 1955 թ. 63,7-ից 1960 թ. իջել է 36,0-ի, նույն շրջանի Ցամաքաբերդ գյուղի կոլխոզում՝ 60,6-ից իջել է 35,0-ի։

Դրությունն այլ է գյուղատնտեսական այն գոտիներում և շրջաններում, որտեղ կոլտնտեսականների եկամուտները մոտավորապես հավասար են բանվորների եկամուտներին և առանձնապես այն կոլխոզներում, որտեղ եկամուտները ավելի բարձր են։ Հայկական ՍՍՌ-ում այդպիսի շրջաններին կարելի է դասել Արարատյան հարթավայրի կոլխոզները։ Այդ գոտու շատ կոլխոզներում ակներևաբար արդյունաբերություն տեղափոխվելու նյութական շահագրգռվածություն չկա, եթե անգամ կոլտնտեսությունը չի ապահովում բարձր զբաղվածություն հանրային տնտեսության մեջ։ Արարատյան հարթավայրում կոլտնտեսականի աշխօրի միջին եկամուտը 1959 թ. կազմել է 25·5 ռուբլի, իսկ մարդ-օրվա արժեքը՝ 28,3 ռուբլի։ Կոլխոզնիկի միջին տարեկան եկամուտը հանրային տնտեսությունից, կազմել է 5,5 հազար ռուբլի (տարեկան 193 օր միջին զբաղվածության պայմաններում)։ Եթե դրան ավելացնենք անձնական օժանդակ տնտեսությունից ստացած եկամուտը, որը Արարատյան հարթավայրի շատ կոլխոզներում հասնում է նշանակալից չափերի, ապա հասկանալի կլինի, թե ինչու այդ գոտում կոլտնտեսականները շահագրգռվածություն չունեն գյուղից տեղափոխվելու դեպի արդյունաբերություն։

Ակադեմիկ Ստրումիլինը իրավացի է, երբ, անդրադառնալով գյուղատնտեսական բնակչության գյուղից քաղաք տեղափոխվելու հարցին, գրում է, թե այդպիսի վերաբնակեցումը «բարդանում է նրանով, որ առավել հարուստ

ԳՐԱԴԱՐԱՆ

կոլտնտեսություններից, որտեղ բանվորական ուժի ավելցուկը հատկապես նշանակալից է և անընդհատ պետք է աճի, այդպիսի ռեզերվների ներդրավումը դառնում է առավել նվազ ապահովված։ Որքան հարուստ է կոլտնտեսությունը, այնքան պակաս են կոլտնտեսականների կողմից այն թողնելու և այլ աշխատանքի անցնելու ցանկությունը և տնտեսական խթանները»[7]։

Այդ բանը լրիվ չափով վերաբերում է Արարատյան հարթավայրի կոլտնտեսություններին։ 1955 թ. այս դոտում յուրաքանչյուր աշխատունակ կոլտնտեսականի տարեկան միջին աշխօրերի քանակը կազմել է 277, իսկ 1959 թ. միայն 218։ Այսպիսով, Արարատյան հարթավայրի գյուղատնտեսության մեջ աշխատողի զբաղվածությունը վերջին տասը տարում զգալիորեն իջել է։ Հավանաբար բանվորական ուժի առաջացող ավելցուկը մասամբ մնում է գյուղում, չթողնելով կոլտնտեսությունն ու անձնական տնտեսությունը։ Բնութագրական են համապատասխան ցուցանիշները հիշած լեռնային շրջանների կոլխոզների գծով։ Ախտայի շրջանում աշխատունակ կոլտնտեսականի վաստակած աշխօրերի քանակը 203-ից ավելացել ու հասել է 231-ի, Սևանի շրջանում 238-ից հասել է 294-ի։

Արարատյան դաշտի և մի քանի լեռնային շրջանների վերաբերյալ բերած ցուցանիշները հաստատում են տնտեսական խթանի և կոլխոզային բնակչության բարեկեցության ազդեցությունը բանվորական ուժի վերաբաշխման վրա՝ գյուղատնտեսության և արդյունաբերության միջև։ Այդ գործոնի ազդեցությունը Հայկական ՍՍՌ-ում աստիճանաբար բերում է գյուղատնտեսության մեջ բանվորական ուժի ավելցուկի գոյացման, առկայության և օգտագործման որոշ տերիտորիալ տեղաշարժերի Լեռնային մի շարք շրջաններում, որոնք նախկինում համարվում էին ժողովրդական տնտեսության այլ ճյուղերը բանվորական ուժով համալրելու գլխավոր աղբյուրը, այժմ, շնորհիվ նրանց տերիտորիայում արդյունաբերության բուռն զարգացման, կորցրել են իրենց նախկին նշանակությունը։ Մյուս կողմից, Արարատյան դաշտի շրջաններում, որտեղ նկատելի է գյուղատնտեսական արտադրության մեծ ինտենսիվություն և աշխատանքների մեծ սեզոնայնություն, հիմնականում արդեն հաղթահարել են նախկինում նկատվող գյուղատնտեսական արտադրությունը բանվորական ուժով ապահովելու դժվարությունները՝ և նույնիսկ նրանց մոտ առաջ է գալիս բանվորական ուժի ավելցուկ, որը մնում է տեղում։

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսական տարբեր գոտիներում և շրջաններում գյուղատնտեսության բանվորական ուժի ավելցուկի ստեղծման և նրանց ժողովրդական տնտեսության այլ ճյուղեր տեղափոխելու տարբեր տենդենցները խոսում են այն մասին, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր կոնկրետ շրջանի պայմաններում ուսումնասիրել ժողովրդական տնտեսությունը բանվորական ուժով համալրելու ձևերի հարցը, կատարելագործել այդ ձևերը այն հաշվով, որ բանվորական ուժի ազատումը գյուղատնտեսությունից ընթանա նորմալ և ապահովի նաև գյուղատնտեսական արտադրության բազմակողմանի զարգացումը։

---

7 Струмилин. О диференциальной земельной ренте в условиях социализма. Вопросы экономики, 1960, № 7, стр. 94.